

## ԵՐԿԱՔՈՒՂԻՔ

Զկայ երկիք մը ուր այնչափ շատցած ու կատարելագործուած ըլլայ երկարուղույն գործածութիւնը, ինչպէս յԱմերիկա. շոգեկառաց ընթացքն ալ այնչափ սաստիկ արագ է հոն, որ շատ անգամ աղետալի վնասներ կրպատանին : Մօտերս նոր նորքի երկարուղեաց մեկուն վրայ տեսնուեր է ահազին կառաջարք (train) մը, յորում 144 վակոն կան եղեր, ամենքն ալ ապրանքով ու կենդանեօք լեցուն . եօրը շոգեկառք կըքաշեն եղեր այս սարսափելի բազմութիւնը, որոյ նմանը զետքեր լսուած :

Ամերիկայէն ետքը բազմութեան ու արագութեան կողմանէ անուանի են Անգլիոյ երկարուղիքը : Հոս տեղեկութեան համար դնենք ատոնց 1840էն մինչեւ 1852 տարած ու բերած մարդկանց թիւն ու անոնց հանդիպած վտանգները :

1840էն մինչեւ 1852 ձանապարհորդաց թիւն եղեր է 478,448,607, յորց 257 հոգի այլ եւ այլ վտանգներով սպաննուեր են, եւ 1,416 հոգի վիրաւորուեր են . ըսել է թէ 2,018,239 ձանապարհորդաց մէջ մէկ հոգի մեռեր է, եւ 537,946 հոգւոյ մէջ մէկը վիրաւորուեր է :

Շոգեկառաց մէջ գործածուած 40,486 ձարտարապետներէն, մեքենագործներէն, շեռուցիչներէն եւ գործաւորներէն 275 հոգի մեռեր եւ 274 վիրաւորուեր են . որ համեմատութեամբ՝ 177 հոգւոյ մէջ 1 մեռած կուզայ, եւ 148ի վրայ 1 վիրաւութեած :

1844էն մինչեւ 1851 ձանապարհորդները 547,044,469,484 մղոն տեղ շրջեր են, եւ 176 հոգի մեռեր են, որ համեմատութեամբ 40,025,595 մղոնի մէկ հոգի կիյնայ :

Այս համեմատութիւններով երէ ենքադրենք թէ ձանապարհորդ մը զիշեր ցորեկ երկարուղուվ ձամբայ ընէ: ու ամեն մէկ ժամուն՝ 20 մղոն տեղ կորէ, տարին 175,200 մղոն կընէ, եւ կընայ 228 տարի ձամբորդութիւն ընել՝ առանց վտանգի մը հանդիպելու :

Սրդէն վերը լիշուած բուոց մէջ 3 հոգի մեռած ու 7 վիրաւորուած են՝ դեռ կառաջարքը բոլորմին չկեցած դուրս ցատքելուն համար :

Գերմանացիք իրենց ծանրակաց բնութիւնն ու խոնեմութիւնը երկարուղեաց գործածութեան մէջ ալ ցուցընելով, շատ մարդասպան վտանգներէ պատ եղեր են, ինչպէս որ այս հաշուէն ալ քա-

ջայալու կերեւի : Գերմանիոյ մէջ 1848էն մինչեւ 1850 ճամբայ ըրեք են 51,715,297 հոգի՝ 1,455,436,890 մղոն տեղ, եւ մէջերնին 4 հոգի սպաննուեր ու 4 հոգի վիրաւորուեր է . գործաւոր, մեքենագործ, շեռուցիչ եւ այն՝ 54 հոգի սպաննուեր ու 88 վիրաւորուեր են :

Բոլոր այս հաշիններէն այն կընատառենք որ աւելորդ է սմանց երկարուղեաց վրայ ունեցած ջափազանց երկիւղը . վասն զի այսչափ վտանգ որ եւ իցէ ձամբորդութեան մէջ կրպատանի, եւ գուցէ շատ ալ աւելի . անկարելի կրնայ ըստի որ երկուք ու կես միլիոն ժողովուրդ հասարակ միջոցներով ձամբորդութիւն ընել, եւ անոնց մէջէն նինգ վեց հոգի չմեռնին . եւ սակայն երկարուղեաց վրայ նոյնչափ հոգւոյ մէջ մէկ հոգի միայն կըմեռնի . ըսել է որ երէ ամբողջ Լոնտրայի ժողովուրդն որ երկուք ու կես միլիոն է, ուզէ մէկէն երկարուղիով ձամբորդութիւն ընել, մէջէն մէկը միայն պիտի պակսի :

## ԶՈՒԱՐԺԱՍՏԻՐ ՄՈՐ ՄՅ. ԳԼԻՌՈՒՆ ԵԿԱԾԸ:

Մօտերս ի Փարիզ այր եւ կին իրարմէ բաժնուեցան նետագայ պատճառաւ :

Մարդուն մէկուն աղջիկը վարդախտ հաներ, ու ծանրկեկինիւանդ եր. մայրը կարծես թէ զաւկին հիւանդութիւնը մոռնալով կընագուի կըզարդարուի ու կառքը պատրաստել կուտայ իրիկունը պարահանդեսի երբալու :

— Սյաօր պէտք չէ որ երբաս, կըսէ երիկլը :

— Թողութիւն կընես, կըսէ կինը, խօսք տուեր եմ, չեմ կընար խօսքս ետ առնել առանց մարդավարութեան դէմ գործելու :

— Սղջիկդ ծանր հիւանդ է :

— Շատ չեմ կենար, կես զիշերուն կըդառնամ :

— Գիտցիր որ երէ այս զիշեր դուրս ելլես, մէկ մըն ալ ներս չես մտներ :

Կինը մտիկ ջըներ, կերբայ, եւ ի դարձին դուռը գոց կը գտնէ :

Գատաւորները այս խնդիրը քննեցին ու վճիռ տուին որ մայր մը որ այնպիսի վիճակի մէջ իր զաւակը կը բողու ու զուարձութեանը կերբայ, զաւկին վրայ ունեցած իրաւունքը պէտք է կորսնցընէ :